

## **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) հայտարարում է բաց մրցույթ «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան - ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

1. «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան - ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար կարող են դիմել 65 տարին չլրացած ՀՀ քաղաքացիները, որոնք ունեն.

- բարձրագույն կրթություն,
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ աշխատանքային օրենսգրքը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներ),
- պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

#### **Մրցույթը կանցկացվի 2019 թվականի օգոստոսի 2-ին. Ժամը 11<sup>00</sup>-ին:**

Մրցույթին մասնակցելու համար դիմողը կոմիտե պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում,
- անձնագրի պատճենը,
- լուսանկար 3x4 չափսի,
- քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
- բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

**Դիմողը փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:**

**Փաստաթղթերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը:**

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2019 թվականի հուլիսի 27-ը:**

Մրցույթը կանցկացվի Կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 011 621 735, էլ. փոստ՝ [info@minurban.am](mailto:info@minurban.am)):